ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

20 մարտի 2014թ. ք. Երևան

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ՝ Ռ. ՍԻՆՈՅԱՆԻ

ԿԿ-ի անդամներ՝ Ա. Լոպոյան
Ռ. Դալլաքյան
Կ. Նալբանդյան
Հ. Իգիթյան
Ա. Հարությունյան
Բ. Ղալոյան
Հրավիրված Է. Միքաելյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 17/03/14թ. «Գանձասար-2»-«Միկա-2» (ԱԽ13-14086) խաղին «Գանձասար-2» թիմի ֆուտբոլիստ Մհեր Հարությունյանի (N 6961) հեռացման (լուրջ կոպիտ խախտման համար) մասին /զեկուցող Ա. Լոպոյան/

2. 15/03/14թ. «Ուլիս»-«Արարատ» (ԲԽ13-14065) խաղից հետո «Ուլիս» թիմի ֆուտբոլիստ Նորայր Սահակյանի (N 1703) մրցավարի օգնականին հայհոյելու մասին

3. «Արտսոքս» ՍՊԸ ակումբի տնօրեն Ս. Գասպարյանի 17/03/2014թ. դիմումի քննարկումը /զեկուցող Բ. Ղալոյան/

4. ՀՖՖ Կարգապահական կանոնակարգում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին /զեկուցող Ա. Լոպոյան/

1. 17/03/14թ. «Գանձասար-2»-«Միկա-2» (ԱԽ13-14086) խաղին «Գանձասար-2» թիմի ֆուտբոլիստ Մհեր Հարությունյանի (N 6961) հեռացման (լուրջ կոպիտ խախտման համար) մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

17/03/14թ. «Գանձասար-2»-«Միկա-2» (ԱԽ13-14086) խաղին «Գանձասար-2» թիմի ֆուտբոլիստ Մհեր Հարությունյանի (N 6961) հեռացման (լուրջ կոպիտ խախտման) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 16-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ որակազրկել 5 խաղով, «Գանձասար» ֆուտբոլային ակումբին տուգանել 100000 դրամ:

2. 15/03/14թ. «Ուլիս»-«Արարատ» (ԲԽ13-14065) խաղից հետո «Ուլիս» թիմի ֆուտբոլիստ Նորայր Սահակյանի (N 1703) մրցավարի օգնականին հայհոյելու մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

15/03/14թ. «Ուլիս»-«Արարատ» (ԲԽ13-14065) խաղին «Ուլիս» թիմի ֆուտբոլիստ Նորայր Սահակյանի (N 1703) մրցավարի օգնականին հայհոյելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 16-րդ հոդվածի 12-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, «Ուլիս» ֆուտբոլային ակումբին տուգանել 50000 դրամ:

3. «Արտսոքս» ՍՊԸ ակումբի տնօրեն Ս. Գասպարյանի 17/03/2014թ. դիմումի քննարկումը

ՈՐՈՇԵՑԻՆ՝

«Արտսոքս» ՍՊԸ ակումբի տնօրեն Ս. Գասպարյանի դիմումի քննարկումը «Ասպետ-99» թիմը առաջնությունից հանելու մասին, ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 18-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ «Ասպետ-99» թիմին գրանցել տեխնիկական պարտություն չկայացած բոլոր հանդիպումներում, «Արտսոքս» ՍՊԸ-ին տուգանել 50000 դրամ:

4. ՀՖՖ Կարգապահական կանոնակարգում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի Կարգապահական կանոնակարգում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին

1. 4-րդ հոդվածում ավելացնել 3-րդ կետը հետեվյալ բովանդակությամբ

«Առանձին դեպքերում ելնելով խախտման բնույթից ԿԿ-ին իրավունք է վերապահվում կիռարվող պատժամիջոցները ընդունել պայմանական, լրիվ կամ մասնակի»:

2. Սույն կանոնակարգի 16-րդ, 19-րդ և 21-րդ հոդվածների 5-րդ կետում «Կարգապահական խախտումներ» սյունակում փոփոխել հետեվյալ կերպ՝

«Մրցակցին գոլից կամ ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու համար հեռացված ֆոտբոլիստը»…

3. Սույն կանոնակարգի 16-րդ, 19-րդ և 21-րդ հոդվածների 7-րդ կետում «Կարգապահական խախտումներ» սյունակում փոփոխել հետեվյալ կերպ՝

«Լուրջ կոպիտ խախտման համար հեռացված ֆուտբոլիստը»…

ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՍԻՆՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԼՈՊՈՅԱՆ